

Սորտ ձեռագրերի հնութեան ու հարստութեան մասին առասպելներ էին պատմում ու գիտնականները երազում էին մի օր գոյանով լուսաբանել պատմական շատ գէպեր, քանի որ գեռես 1615 թուին հռոմայեցի ճանապարհորդ Pietro Della Valle-ն ձեռագրերի թւում տեսել էր նաև Տիտոս Լիլիսովի ընագերը։ Սակայն ժամանակի ընթացքում, հետզնետէ և մեծ գժուարութեամբ յիշեալ մատենագարանը այցելած գիտնականներ՝ Տիշչնդորֆ, Բլիսոս, Ռոսպէնսկիյ և իտալացի Անտոն Մոնոզ միանգամայն հրասթափուում են՝ չգտնելով ձեռագրերի թւում ոչ մի հնութիւն, ինչպէս նուև Տիտոսի ընագերը։ Վերջին այցելու Մոնոզը տալով մեզ մատենագարանի նկարագիրը, ի միջի այլոց հաղորդում է մատենագարանում մի քանի գիրք ունեցող թուրքերի հետ ունեցած իւր զրուցատրութիւնը։ Նորա ասելով— թուրքերը մեծ համակրութիւն ունեն գէպի իտալացիք, առաւել ևս գէպի գերմանացիք, իսկ գէպի Ռուսաստանը տածում են ծայրայեղ հակակրութիւն։

Աւելի հետաքրքրելի է մի ուրիշ սիւրպրեզ։ Մոնոզը անհրաժեշտապէս կամենալով լուսանկարել տալ մատենագարանի մի քանի ձեռագրեր և ստիպուած լինելով այդ մասին Սուլթանից նոր իրագէ խնդրել, նա մի օր հետն առնելով հայ լուսանկարիչներ՝ մանում է մատենագարան և չափազանց զարմանում, նկատելով այդտեղ զինուորների ստուար թիւ և մի քանի պալատական պաշտօնեաներ։ Հէնց սկսում են գործի կենալ թէ չէ, պաշտօնեաներից մէկը մօտենում է և ամենայն յարգանքով առում՝ «պարոն, ձեզ հետ եկած լուսանկարիչները հայեր են։ Փաշա-էֆէնդին հարցնում է ձեզ՝ ինչո՞ւ էր գուք հայերին ներս քերել Սուլթանի պալատաց։ Գուք պէտք է անմիջապէս արձակէք նոցաւ Կալող էք հրաւիրել ֆրանսիացի, յոյն, հրեայ լուսանկարչներ, քայց ոչ երբէք հայ»։ Եւ հայ լուսանկարիչները անմիջապէս հեռացւում են պալատից։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ապրիլի 15-ին գաղտնի Կոնսիստորիայում եօթ հոգի կարգինալական աստիճան են ստացել։ Խոպանիայի Բուրգոս քաղաքի արքեպիսկոպոս, Բելգիայի նախաթոռ արքեպիսկոպոսուր, Մագրեգի նունցիոսը, Վենետիկի պատրիարքը, Պալեւմոյի և Պիզայի արքեպիսկոպոսները և Փարիզի նախկին նունցիոսը։ Պապը իւր ճառի մէջ խիստ խօսեց ֆրանսիական կուլտուրկամիկի գէմ։ Նա շատ

Հակուած է դէպի ֆրանսիական ժողովուրգը, որի ցաւերն ոռ
ուրախութիւնները իւրն է համարում։ բայց ֆրանսիական կա-
ռավարութիւնը կամայական կերպով ոչնչացրեց կոնկորդատը-
ռուր որոշուած էր Ֆրանսիայի և Հռովմի յարաբերութիւնները
նապոլէոն մեծի օրերից և աշխատում է իւր հպատակների
սրտից հանել կրօնական կայծի վերջին նշոյլները, որբապղծում
է մասնաւոր և ընդհանուր սեպհականութիւնը, ամբատանում
է ֆրանսիական եպիսկոպոսութիւնն ու հոգեորականութիւնը,
աշխատում է նորա դէպի սուրբ աթոռուր տածած հաւաար-
մութիւնը խախտել, ակնյայտնի սխալ եզրակացութիւններով
ամբատանում է պապին, որպէս թէ նա ժողովրդական կա-
ռավարութեան դէմ է, այն ինչ ինքը յարգանքով է վերաբեր-
ւում։ Բայց ուրախ է պապը, որ չնայելով թշնամիների գործ
գրած խորամանկ միջոցներին, ֆրանսիական ամեողջ եպիսկոպո-
սութեան և հոգեորականութեան մէջ համերաշխութիւն է իշ-
խում և ժողովսւրդը հաւատարմութեան ապացոյներ տալիս։

Խակ Ապրիլի 18-ին նոր կարգինալներին կարմիր գլխարկ
տալու ժամանակ, պապը դատապարտեց նոր ըեփորմ-կաթոլի-
կութիւնը։ Այս շարժումը պապի կարծիքով եկեղեցու համար
աւելի վտանգաւոր է, քան Ֆրանսիայի դէպիերը։ «Խռովտար-
ները նրանք են, որոնք սխալ ձեւը տակ մեծ մոլորութիւններ են
տարածում դաւանութեան զարգացման մասին և զարձ են
քարոզում դէպի մաքուրը, պարզը, դարձ առատուածաբանական
մեկնութիւններից, ժողովների վճիռներից դէպի մաքուր աւե-
տարանը, աղատութիւն եկեղեցու խնամակալութիւնից, բայց
ոչ այն ձեռվ, որ բոլորովին հերքեն այն և արտաքսուին, և ոչ
էլ ընդունում են, ինչպէս պէտք է. վերջապէս համակերպու-
ալութիւն են քարոզում ժամանակի ուղղութիւններին և պա-
հանջներին ամէն բանի մէջ, սէր են քարոզում առանց հա-
ւատի, որ շատ նուրբ է անհաւատների համար, բայց մի և նոյն
ժամանակ յաւեխտենական կորստեան ճանապարհն է հարթում
ամէնքի համար։ «Այս նոր շարժումը, թէև հերետիկոսութիւն չէ,
բայց հերետիկոսութեան սաղմն ու թոյնը իւր մէջ է կըում»։
«Սրանք նոր տեսակի հերետիկոսներ են, որոնք Ա. Գրքի ներշնչ-
ման վարդապետութիւնը չեն ընդունում հաւատոյ վերաբե-
րեալ ամէն ճշմարտութեան հաստատուն աղբիւր, այլ հաստրակ
գիրք»։ Ա. Գրքի ներշնչման գաղափարը համարեա նոյնացնում
են բանաստեղծական ներշնչման հետո Այս և սոցա նման մոլո-
րութիւններ են քարոզում նրանք։ Պապը յոյս ունի եպիսկո-
պոսների օգնութեան վերայ, թէ նոքա կաշխատեն զեկուցանեք
հովմի կանգը բեկացինին, հարկաւոր դէպետմ իրենք էլ կարող

ևն դատապարտել, և օժանդակ կլինին պապին «կառավարելու եկեղեցին, մաքառելու մոլորութիւնների գէմ, պաշտպանելու Ֆջարտութիւնը մինչև մահ»:

Դոմինիկեան կարդի գեներալին ուղած մի ուրիշ գրութեամբ մատնացոյց է անում պապը Թովմաս Ագուլնացու վերաց՝ որպէս աստուածաբանական գիտութեան նախագաղափարի վելայ. Նրա հետեւողութեամբ Դոմինիկեանները պէտք է մշակեն աստուածաբանական գիտութիւնները ու դաւանաբանութիւնը յատկապէս և մաքառեն նոր ուղղութիւնների մոլորութիւնների գէմ:

Բարեփոխութեան բարեկամ կաթոլիկների պարբերական հրատարակութիւններն ու գրքերը պապի ցանկութեան համեմատ կարդինալների, եպիսկոպոսների ինքեւս կոնդրեգացիոնի կողմից նկատողութեան են ենթարկում կամ արգելում:

Ներկայ տարբե յուլիոի 17-ին հրատարակուեց վաղուց սպասուող պապի նոր սիլլաբուսը, որ կազմում է հռոմէական եկեղեցու այժմեան ամենախոշոր եղելութիւնը: Խակապէս այս սիլլաբուոք պէտք է ի լոյս հանուէր միմիայն օգոստոս ամսում պապի շրջաբերականի հետ միասին, բայց, ինչպէս երկում է, վերջերս հռոմէական եկեղեցու մէջ սկսուած (յատկապէս Գերմանիայում) գործնական և կրօնական ազատ շարժումը ոտիւպել է պապին շտապել և հրատարակել եղածը: Բարեպաշտ Պիոս Հ-ը, ինչպէս ֆրանսիական նոր օքէնքի (եկեղեցու և պետութեան բաժ.՝) առթիւ արձակութ շրջաբերականից առաջ, այժմ ևս պատուիրեց նախ քան շրջաբերականի հրատարակումը աղօթել եկեղեցում և վատրիկանում, ուր նորան աղօթքի ֆամանակ, ինչպէս ասում են, երկում է տեսուիք (Աստուածամայրը—Madonna del Carmine) և աւելի ևս ամրապնդում իւր նոր որոշման մէջ:

Նոր սիլլաբուոք նշովում է [Ժամանակի գլխաւոր մոլութիւնները] 65 յօդուածներով, որոնք են՝ եկեղեցու հեղինակութեան վարդապետութիւն (1—4), մոլորութիւնների որաշումն (5—8), սուրբ գրքերի ներշնչման վարդապետութիւնը (9—12), նոր կտակարանի ծագման պատմութիւնն ու էութիւնը, մասնաւորապէս Յովհաննու աւետարանից ոկոսած (13—19), յայտնութիւնն ու եկեղեցու վարդապետութիւնը այդ առթիւ (20—25), գաւանանքների էութիւնը (26), Քրիստոսի աստուածութիւնը (27—35), նորա յարութիւնը (36—37) և խաչելութիւնը (38), խորհուրդների ծագումը (39—51), եկեղեցու